

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի փետրվարի 24-ի քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը, Արցախի Հանրապետության Սահմանադրության 141-րդ հոդվածին համապատասխան, որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<b>1.</b>	<b>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</b>
	«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է օրենսգիրքը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:
<b>2.</b>	<b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b>
	«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն համապատասխանեցնելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 141-րդ հոդվածով ամրագրված դրույթներին, համաձայն որի Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:
<b>3.</b>	<b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b>
	Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:
<b>4.</b>	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է Լեռնային Ղարաքաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում արտացոլել սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանված առանձին իրավակարգավորումներ:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ